ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«21» հուլիս 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-39/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.03.2016թ. թիվ 1/73-3/10844-16 գրությամբ ներկայացված «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 05800029) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Գյումրու «Ժպիտ», «Լապտերիկ», «Լիանա» և «Փարոս» ՀՈԱԿ-ներում գնումների համակարգող Գայանե Մկրտչյանի 05.02.2016թ. և 11.02.2016թ. գրությունների հիման վրա, 25.02.2016թ. թիվ 1/73-3/7014-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ Ընկերությունը մասնակցել է միայն «Ժպիտ» և «Փարոս» ՀՈԱԿ-ներում (այսուհետ նաև՝ Պատվիրատուներ) կազմակերպված ընթացակարգերին:

Կենտրոնը ուսումնասիրելով գործում առկա փաստաթղթերը 21.03.2016թ. թիվ 01/04.1/1057-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 25.02.2016թ. թիվ 1/73-3/7014-16 գրությամբ ներկայացված «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 05800029) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին ուղղված 30.03.2016թ. թիվ 1/73-3/10844-16 գրությամբ պահանջել է նախաձեռնել «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ն 17.03.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերությունը 27.01.2016թ. դրությամբ ***(հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)*** չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ընկերությունը վերը նշված գրությամբ կից ներկայացրել է Գյումրու տարածքային հարկային տեսչության 16.03.2016թ. թիվ 1217 տեղեկանքի պատճենը, որի համաձայն «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ն 27.01.2016թ. դրությամբ չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային վճարների գծով:

Ընկերության ներկայացուցիչը, մասնակցելով 05.05.2016թ. ժամը 16:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-39/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, հայտնել է, որ հայտերը ներկայացնելու օրերի այն է՝ 26.01.2016թ. և 27.01.2016թ. դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Ընկերությունը ներկայացրել է նաև Գյումրու տարածքային հարկային տեսչության 15.03.2016թ. թիվ 1211 տեղեկանքը, որի համաձայն՝ «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ն 26.01.2016թ. դրությամբ չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային վճարների գծով:

3. <u>Գյումրու «Ժպիտ» և «Փարոս» ՀՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

Գյումրու «Ժպիտ» և «Փարոս» ՀՈԱԿ-ները 05.02.2016թ. և 11.02.2016թ. գրություններով Կենտրոնին են ներկայացրել «ՀՀՇՄԺՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-01/16» և «ՀՀՇՄՓՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-01/16» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

4. <u>ՍՑ-ԳԲԽ-39/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 30.03.2016թ. թիվ 1/73-3/10844-16 գրությամբ ներկայացված «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Գյումրու «Ժպիտ» և «Փարոս» ՀՈԱԿ-ների (այսուհետ նաև՝ Պատվիրատուներ) կողմից կազմակերպված «ՀՀՇՄԺՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-01/16» և «ՀՀՇՄՓՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-01/16» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերին մասնակցելու նպատակով 26.01.2016թ. և 27.01.2016թ. հայտ է ներկայացրել «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ն:

2. Մասնակիցը հայտերի N 2 հավելվածներով՝ Ընթացակարգերին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտերը ներկայացվելու օրերի դրությամբ չունի ժամկետանց հարկային***

պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Պատվիրատուները ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված հարցմամբ խնդրել են տրամադրել տեղեկատվություն «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

4. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուներին տրամադրվել են եզրակացություններ, համաձայն որոնց «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ն ***2016թ. հունվարի 27-ի*** դրությամբ (Գյումրու «Փարոս» ՀՈԱԿ-ին հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 500,029 ՀՀ դրամի չափով:

5. ՀՀ ֆինանսների նախարարությունը 30.03.2016թ. թիվ 1/73-3/10844-16 գրությամբ Կենտրոնին տեղեկացրել է, որ «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ն ***2016թ. հունվարի 26-ի*** դրությամբ (Գյումրու «Ժպիտ» ՀՈԱԿ-ին հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 499,289 ՀՀ դրամի չափով:

6. Կենտրոնը ուսումնասիրելով գործում առկա փաստաթղթերը 21.03.2016թ. թիվ 01/04.1/1057-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 25.02.2016թ. թիվ 1/73-3/7014-16 գրությամբ ներկայացված «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 05800029) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

7. ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին ուղղված 30.03.2016թ. թիվ 1/73-3/10844-16 գրությամբ պահանջել է նախաձեռնել «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

5. <u>ՍՑ-ԳԲԽ-39/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով Նախարարության 30.03.2016թ. թիվ 1/73-3/10844-16 գրությունը, Գյումրու «Ժպիտ» և «Փարոս» ՀՈԱԿ-ները 05.02.2016թ. և 11.02.2016թ. գրությունները և կից փաստաթղթերը, «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ի 17.03.2016թ. գրությունը, Գյումրու տարածքային հարկային տեսչության 16.03.2016թ. թիվ 1217 և 15.03.2016թ. թիվ 1211 տեղեկանքները, հայտնում է հետևյալը.

Գյումրու «Ժպիտ» և «Փարոս» ՀՈԱԿ-ների կողմից կազմակերպված «ՀՀՇՄԺՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-01/16» և «ՀՀՇՄՓՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-01/16» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերին մասնակցելու նպատակով 26.01.2016թ. և 27.01.2016թ. հայտ է ներկայացրել «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ն:

Մասնակիցը հայտերի N 2 հավելվածներով՝ Ընթացակարգերին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտերը ներկայացվելու օրերի դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:***

Պատվիրատուները ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված հարցմամբ խնդրել են տրամադրել տեղեկատվություն «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցումների՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուներին տրամադրվել են եզրակացություններ, համաձայն որոնց «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ն ***2016թ. հունվարի 27-ի*** դրությամբ (Գյումրու «Փարոս» ՀՈԱԿ-ին հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 500,029 ՀՀ դրամի չափով:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 30.03.2016թ. թիվ 1/73-3/10844-16 գրությամբ Կենտրոնին տեղեկացրել է, որ «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ն ***2016թ. հունվարի 26-ի*** դրությամբ (Գյումրու «Ժպիտ» ՀՈԱԿ-ին հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 499,289 ՀՀ դրամի չափով:

Ընկերության ներկայացուցիչը, մասնակցելով 05.05.2016թ. ժամը 16:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-39/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, հայտնել է, որ հայտերը ներկայացնելու օրերի, այն է՝ 26.01.2016թ. և 27.01.2016թ. դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Ընկերությունը ներկայացրել է Գյումրու տարածքային հարկային տեսչության 16.03.2016թ. թիվ 1217 և 15.03.2016թ. թիվ 1211 տեղեկանքները, որի համաձայն՝ «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ն 26.01.2016թ. և 27.01.2016թ. դրությամբ ***չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ 26.01.2016թ. և 27.01.2016թ. դրությամբ (հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ), ըստ Գյումրու տարածքային հարկային տեսչության կողմից 16.03.2016թ. թիվ 1217 և 15.03.2016թ. թիվ 1211 տրամադրված տեղեկանքների, «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ն չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն, ուստի Կենտրոնը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 30.03.2016թ. թիվ 1/73-3/10844-16 գրությամբ ներկայացված «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Հետևաբար Կենտրոնը առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 30.03.2016թ. թիվ 1/73-3/10844-16 գրությամբ ներկայացված «ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ՎԱՆ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 05800029) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ՝ Մ. Կատվայան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-39/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան